

9. *Trichog*

լիս էին դարձնում չորս աստիճան. ներկայ միամիտ է լինում զրան Գալանդու ապրող Կապի և Վրթանդի վարդապետները, որոնցից մէկը մամ և գիրք բռնողն է լինում, իսկ միւրը խարտաւրակը:

Գուցէ անհամբեր ընթերցողը հարցնի, ինչ միամիտ է լինում զրան Գալանդու ապրող Կապի և Վրթանդի վարդապետները, որոնցից մէկը մամ և գիրք բռնողն է լինում, իսկ միւրը խարտաւրակը:

Այս, իբրեւ այդ չէ զարմանալին, այլ այն որ ձեռնարկութիւնը աշխատել են կատարել գաղտնի, այնպէս որ ոչ ոք չիմանայ: Բայց գաղտնիքը չի ծածկւիլ. ոմանք լսելով որ Գալանդու մի բան կատարել է, ծառայից (տիրացուից) հարցնում են՝ ինչու գնացիր Գալանդ. նա միամտաբար ասում է, որ սրբազանը ինձ չորս աստիճան տուցի. իսկ սրբազանը խիստ խորհրդաւոր լուսկին է պահում և հարցնողին էլ թէ՛ պատարագին եկեղեցում չէիք, ո՞ր էիք, պատարանում է՝ շտանը դործ ունէիք. իսկ ծառան երկրորդ, երրորդ հարցնողներին ասում է, որ ձեռնարկութիւն չէ եղել: Թէ Մակար եպիսկոպոսը գաղտնի է ուղեցել կատարել՝ դրա երկրորդ տպացոյցն էլ այն է, որ նա չէ վերցրել ոչ գաւազան և ոչ նմիրորոն, չեն եղել այնտեղ ոչ սարկաւաղ և ոչ երկրչինք:

Այդ, մեզ զարմացնում է այս ապօրինի ձեռնարկութիւնը և չը գիտեմք, արդեօք Վհալա-ոին յայտնի է այս գէպը և գիտէ, որ ասանց գաւազանի և նմիրորոնի գողտնի ձեռնարկութիւն է կատարում Մայր վանքից հինգ քալի հեռու: Եւ դեռ այդպիսիները համարձակութիւն ունեն իրանց եկեղեցու նուիրականութեան պաշտպան հաշակելու և քարոզելու տաճարի մաքրութեան, կեղծիքի, խաբեղաւորեան մասին և հաւատացնելու միամիտներին, որ ուրիշներին սխալ ծրարականութիւնն ու եկեղեցական մեքենայական աշխատանքի սխալ կատարելը, ինչպէս որ, բուրբառ, գցելը, եթէ լաւ չէ կատարվում, ծանրանում է իրանց խղճի վրա: Այս, Գրիգորի այդպիսիների համար ասաց, զորոյս կրանք և զմիջոցա քամէք:

X.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Լ էյայցիք, մայիսի 5-ին

Ստացայ մեր չքաւոր ընկերի օգտին «Մշակի» խմբագրութեան հանդանակած 44 բուրլին և յանձնեցի ըստ պատկանելուն: Խորին չնորհա-կաւութիւն թէ ձեզ, որ սիրովոր պատրաստա-կանութեամբ հանդանակութեան ձեռնարկեցիք, և թէ յարգելի նուիրատուներին, որոնք այս ընդհանուր թշուառութեան և աղետի միջոցին չը խնայեցին իրանց կօպէկները նաեւ ի նպատակ մեր դժբաղդ ընկերակցին:

Օգտվելով առիթից, աւելորդ չեմ համարում յայտնել, որ մեր ընկերը ժամանակաւորապէս արդէն ապահովված է և այժմ տեղափոխված է Բերլին իր ուսման ընթացքը շարունակելու:

Հայ ձեռնարկական ընկերութեան կողմից՝

Վ. Նալբանդեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 29-ին

Բարեհաճեցէ՛ք ուղղել այն սխալները, որոնք ստղծած էին «Մշակին» 44 և 49 համարներում: Առաջինի մէջ անհարկութեամբ, իսկ երկրորդի մէջ՝ ուղղակի ցոյց է տրված, որպէս թէ՛ նա մի գաղթականի և երկնայ միտելին՝ պահանջել, եւ սկզբից 4 բուրլին, և մինչև չեմ ստացել այդ փողը՝ երկնայն չեմ միտել: Այդ լուրը բոլորովին սխալ է, այն հիման վրա, որ ես բնաւ փող չեմ պահանջել՝ ոչ սկիզբը և ոչ վերջը: Այս մասին ակնատես և ակնաշարժող վկայ են համերկայացրած ժամկիւնը: Արեւին Գալապրեան և Յովսէփ Առաքելեան և հայր ծննդին՝ Յակովբ Գրիգորեան և կնքահայրը՝ Յովսէփ Առաքելեան Սարգսեան: Միտումութեանց յետոյ կնքահայրը առաջարկել է 2 բուրլին, և եթէ դուրս գանք լուսազինը և կատարանին վերադառնալիս վճարած վարձը մնում է մի բուրլին յիսուն կօպէկ: Վերջը տեղեկանալով իմացայ, որ տիրացուն ստացել է յիսուն կօպէկ և աւազան բերող ժամկիւնը՝ քառասուն կօպէկ, որ ընդամենը կանի երկու բուրլին իննսուն կօպէկ: Իսկ ինչ վերաբերում է

նրանց վիճակին՝ ես բնաւ անտեղեկ եմ, որովհետեւ բոլորովին ժամանակ չունէի հետաքրքրվելու, քանի որ երկնայն ստատիկ տկար էր և չտալում էի մէկ քանի վայրկեան առաջ մկրտել երկնայն՝ որ չը լինի թէ անկնունք մեռնի: Իսկ եթէ ես, ուրիշ քահանաների նման, արժան չը համարէի գնալ յաջնած մշակի տունը և երկնայն անկնունք մեռնէր՝ այն ժամանակ ինչ ահազին մեղադրանքներ պէտք է բարդվէին ինձ վրա...

Մտնուե միաբան՝ Սիմէոն քահ. Զմայեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 2-ին

Խոնարհաբար խնդրում եմ «Մշակի» մէջ աւելի հետեւեալ երկատորը: Ինչու եմք մեղադրում մեծամեծ զիպլումաններին, օտար խմբագիրներին և զանազան պաշտօնեաներին, թէ նրանք անբարեխիղճ կերպով օգտվում են հայ ազգի այսօրվայ անմիջիկա վիճակից, քանի որ մեր հոգեւոր հայրերն իսկ իրանց պարտաւորութիւնները կատարելիս՝ չեն զանազանում զըմբաղը, քայցած ու բոքիկ գաղթականին ուրիշներէջ:

Այս դրա նոր ապացոյցներից մէկը: Երէկ, մայիսի 1-ին, երեկոյեան ժամի 7-ին, Թիֆլիսի Նազօրեան փողոցով անցնելիս, ես և իմ մի ծանօթը հանդիպում ենք մի գաղթականին, Յակոբ Գրիգորեանին, որը պտտեց մեզ, թէ ինչպէս նրա երկնայն հիւանդանում է և նա հրաւիրում է Մտնուե եկեղեցու տէր-Սիմէոն քահանային մկրտելու համար հիւանդ երկնային, և մկրտութիւնը վերջանալուց յետոյ, աղքատ գաղթականը առաջարկում է քահանային մի բուրլին, ներողութիւն լինողերէս, որ աւելի չէ կարող տալ, եթէ Բարեգործական ընկերութիւնից չը ստանար 5 բուրլին նպատակ, այնու ամենայնիւ, քահանայն մեծ անբաւականութիւն է յայտնում, ասելով՝ «ես հօքս ծառան չեմ» և պահանջում է աւելի մեծ վարձատրութիւն: Գաղթականը ստիպված է լինում տալ նրան երկու բուրլին, իսկ արեւոյթին՝ մի բուրլին: Մի և նոյն ժամանակ գաղթական Յակոբը յայտնեց մեզ, թէ տէր-Սիմէոնը դիմել է իրան և պահանջում է դրաւոր կերպով յայտնել, թէ ինքը վարձատրութիւն չէ ուղղել նրանից: Գաղթականը, զարմանալով հոգեւոր հօք այդպիսի յանդիմանութեան և կեղծման վրա, մերժում է...

Բժիշկ Յ. Տէր-Գալեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 23-ին

«Մշակ» լրագրի № 42-ի մէջ կարդացի պ. Հ. Առաքելեանի «Պտույտ գաղթականների մէջ» յօդուածը, որ ի թիւս այլոց յիշատակում է երկու քահանաներ, որոնք զանգուտել են իրանց զրոյթեան վրա, աւելով, որ հոգեւոր իշխանութիւնը իրանց վրա ուղարկութիւն չը դարձնու-լուց յետոյ՝ մինչև անգամ անարդում է: Գաղթական քահանաների բողոքը սուտ է: Հոգեւոր իշխանութեան կարգադրութեամբ՝ Ծաղկազարդ կերակի օրը, Թանգոյեան եկեղեցու քահանաները ժողովել են 9 բ. և յանձնել այդ քահանաներին. Կաթողիկէ եկեղեցում ժողովել և յանձնել են 10 բ.: Քահանաները միւս օրը եկան ինձ մօտ և ասեցին, որ այդ դուստրը իրանց ճանապարհածախին համար շատ ասկաւ է, ուստի երկրորդ անգամ, աւագ հինգարկի օրը, նշանակելի քահանայն և Ջորաշէն եկեղեցիները, — առաջինում բարեկիցն Յովհաննէս քահ. Մարտիրոսեանց ժողովել և յանձնել է նոյն գաղթական քահանաներին 60 բ., երկրորդում՝ Սարգիս աւագ-քահանայ Աղաջանեանց ժողովել և յանձնել է 50 բ., և այդպիսով պ. Առաքելեանի յօդուածում յիշած ծերունի և երիտասարդ բողոքող քահանաները ստացել են ընդամենը՝ 129 բուրլին: Հիշում եմ համար կեղեցիկները պ. Առաքելեանին՝ զիմի յիշեալ եկեղեցիները քահանաներին, որպէս զի իր սխալն ուղղէ և հոգեւոր իշխանութիւնը իր հաճոյց խաղալը չը չինէ:

Ինչ ունի պ. Առաքելեան և սրա զէմ, որ նրանք Վալդի մի քահանայի ձեռքով հեռագրել են իրանց ընտանիքներին Թիֆլիսից ազգ մեկնելը:—Այս աղբան, բողոքող և կօպէկի համար

լաց եղող քահանաները՝ մանկիւններ են զէն զցում:

Թիֆլիսի հայոց եկեղեցիների գործակալ՝

Վ. ա. քահ. Խարաղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս Թիֆլիս է եկել մի գերմանացի, Ֆիշեր անունով, որին յանձնված է գերմանական մի նպատակաւոր յանձնաժողովի կողմից անգլիականներ հաւաքել Թիֆլիսից փախած և կողկաւում ապաստան գտած հայ գաղթականներին մասին: Բացի դրանից Ֆիշերը յանձնարարութիւն ունի անցնել Ուրմիա և այնտեղ մի ապաստարան հաստատել Պարսկաստան փախած հայ գաղթականների համար:

Մի յոյն երիտասարդ, մանկուլ մեր խմբագրատուն հետեւեալ տեղեկութիւնները հաղորդեց յայնաց Դանիա Գարիկ, որիորդ Ելենա Կոնստանտինէզիսի մասին: Նա այժմ, 3,000 կամաւորների գլուխ անցած՝ գտնվում է Էպի-րոսում: Օրիորդը՝ 17 տարեկան է, գեղեցիկ, համարձակ և աներկիւղ: Նա իր ուսումը ստացել է Սթէնքում և լաւ գիտէ յունարէն, թիւրքերէն, իտալերէն, ռուսերէն և մասամբ ֆրանսերէն: Սթէնքից 1895 թ. ծնողների հետ միասին եկաւ Կովկաս և մի առժամանակ մնաց նախ Բաթում և ապա Թիֆլիս: Սթէնքից ամիս ու կէս առաջ, երբ յոյն-թիւրքական սահմանի վրա հրացանի առաջին ձայները լսվեցին, ոգևորված կոչը թողեց Կովկասը և շտապեց վրէժնիւղի հայրենի երկիրը: Աթէնքից նրան ճանապարհ գցեցին զէպի պատերազմի դաշտ ողորված ցոյցերով, և այն բօպէին, երբ գեղեցիկ ազգի-կը, յունական դրօշակը ձեռքին, անցաւ կամաւորների գլուխը՝ հետեւողները լցվեցին անսովոր ոգևորութեամբ: Եւ այդ ոգևորութիւնն է, որ մի բուն մարդկանց սիրտ է տալիս կուրելու Էպիւրոսի արիւնոս դաշտերում, ուր արդէն չա-տերը զոհ են գնացել թշնամու անհաւասար պո-մի առաջ...

Մեր նշանաւոր հեռագրի Խորէն եպիսկոպոս Ստեփանէ Ելմիսիանց եկաւ Թիֆլիս Երէկ, մա-յիսի 5-ին, խորէն եպիսկոպոսը այցելեց կառա-վարչապետ իշխան Գոլցիկին: Եթէ սրբազան Ստեփանէի Թաւրիզ դնալը չափովի, նա պէտք է մնայ ու խաչ վանքում, ուր այժմ ուղեւորվում է:

Երգումի ուսուցչ հիւպատոսարանի թարգման Պրոքիմակի, որ Ստանի միջնադպրէն քննիչ յանձնաժողովի անդամն էր, իբրեւ ուսուցչ կա-ռավարութեան պատուիրակ, մի քանի ժամանա-կից ի վեր գտնվում է Թիֆլիսում:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 20-ին օր. Ֆեւրելեանները տուեցին իրանց վերջին ներկայացումը և գնացին Ալեքսանդրօպոլ: Այն-տեղ էլ կը տան երկու ներկայացում և կը գնան Բաթում, ուր հրաւիրված են ներկայացումներ համար: Յանկալի է, որ Թիֆլիսում կաղմի մշտական խումբ, և այդ զէպըմ թող ենք տա-լիս մեզ կարծել՝ որ օրիորդները մեր թատրոնի համար անպիսի նշանաւոր ոյժեր են, որոնցից ցանկալի էր որ խումբը կաղմոյները օգտվէին: Օրիորդ Վարդէթերը գրումների մէջ իր լաւ գով ամենին պակաս չէ տիկ. Սիւրբաշիցի, իսկ օր. Մարին անմասն է վաղմիւրների մէջ»:

ՍԱՄԱՐԿԱՆԻՑ մեզ գրում են. «Այստեղ ես գաղթականների համար 300 բուրլուց աւելի փող հաւաքվեց և յանձնվեց նահանգապետին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՆՆԵՐ

Անգլիական համարները ժողովում: Ինչպէս յայտնի է, անգլիական պարլամենտի անդամ Այմեր Բարթոլեա գերի է վերցված յու-նաց զօրքի կողմից: Անգլիական պարլամենտում այդ առիթով տեղի ունեցաւ մի բնորոշ հարցա-սնդում: Պարլամենտը չէր կարողանում իր ծիծաղը

պահել, երբ յիշում էր այն գաւազանայն դրո-թիւնը, որի մէջ ընկել է Բարթոլեա իր չափազանց թիւրքասիրութեան պատճառով: «Daily News» լրագիրը խմբագրական մի նկատողութեան մէջ չի շարունակում յայն-թիւրքական ողբերգութեան այդ գաւազանայն միջնադէպի վրա, համարելով նը-րան ուղեւոր: Հարցապնդումը հետեւան էր:

Նաւապետ Ֆիշեր. Արդեօք ճիշդ է, որ իմ ազգեցիկ ընկերակցները մէկը (քարճաւաճայն և երկարատես ծիծաղ) այժմ գերի է (ծիծաղ) յունական զինուորականներից մէկի մօտ (լուս-ցեք, լսեցէք), որ նրան վերցրել են յունական ա-փի մօտով զէպի Սալօնիկ անցնող մի թիւրքա-կան նաւից. արդեօք անգլիական կառավարու-թիւնը միջոցներ ձեռք է աւել ազատելու ան-միջապէս (ծիծաղ) նրան, թէ նա պէտք է հա-մարվի պատերազմի աւար (երկարատես ծիծաղ, որին միացան և միմիտները):

Կըրգոն. Ժողովը զէպի իր ընկերակցը վե-րաբերվում է արժանաւոր ուղարկութեամբ: Ճիշդ է, որ Բարթոլեա բռնված է յունական ափի մօտ, սակայն պէտք է ասեմ, որ նրա անձնաւո-րութիւնը վտանգեց դուրս է: Եւ չեմ կարող ասել թէ ինչ զինանաւթաւոր բանակցութիւն-ներին առիթ կը տայ ներկայ զէպըր, սակայն կարող եմ պնդել, որ նա չի ընդունիլ իբրեւ պատերազմական աւանդ (ծիծաղ): Նա տարված է Աթէնք, ուր կը յանձնվի թագուհու կառավա-րութեան (քարճաւաճայն):

ՊԱՏԵՐԱՅԻ ԿԱՐԻՑ

Պարտաւի կարից. «Times» լրագիրը թը-թակիցը, որ գտնվում էր Թիւրքաց բանակում, հաղորդում է հետեւեալ մանրամասնութիւնը: Պարտաւի մօտ տեղի ունեցած պատերազմի մասին: Կուր սկսվեց ժամի 9-ին առաւո-տեան: Յոյները սկզբից սխալ գործեցին, եր-կար չը պահելով իրանց զիւրքերի վրա: Այն ժամանակ, երբ սկսվեց նահանջումը, յունաց մի փոքրաթիւ զօրաւոր միջոց իր տեղը և մի շարքով ջաջութեամբ զիմադրում էր թը-նամու ահաղին ոյժերին: Բայց որովհետեւ նա ունէր օդանավներ չը ստացաւ, ուստի նրա կո-րովի զիմադրութիւնը անօգուտ էր: Նա էլ ըս-կաց նահանջել կատարեալ կարգապահութեամբ: Մի քանի յունաց զիւրքեր նայեցաւ ուժեղ զիմա-դրութիւն ցոյց տալին:—Պարտաւ բնակիչները վաղօրը գիտէին, որ յոյները պիտի թողնեն թաղարը և հեռացել էին այդտեղից, տանելով իրանց բոլոր ստացուածքը:

Գերմանիայի աջակցութիւնը: «Ու-մանեան» զօրքի իրական հրամանատարն է ար-տիլերիայի գնդապետ Ֆոն-Գրումբիլով, զինու-րական կցորդը Կ. Պոլսի գերմանական զեւապ-նատան մէջ: Թիւրքաց իւրաքանչիւր զիմադրայի մէջ գտնվում են գերմանական ընդհանուր շտա-բի օֆիցերներ, որոնք պարտաւոր են թող չը տալ որ օսմանեան գեներալները դուրս գան այն ընդհանուր ծրարից որ մշակել է ընդհա-նուր շտաբը: Եպիսկոպոս օսմանեան արտիլե-րիայի բոլոր հրամանատարները գերմանացի օֆիցերներ են: Այս հանգամանքները, ինչպէս վկայում են լրագիրները, լաւ ցոյց են տալիս թէ ինչ ահազին ազգեցութիւն է ձեռք բերել Գերմանիան Կ. Պոլսում: Բոսֆորի քաղաքական աշխարհում այժմ Գերմանիան է որ «անձր» և պարզ եղանակ է բերում:

Հայ առեւթ եւ ան պարտաւոր: «Neu Freie Presse» լրագրին հաղորդում են, որ Թիւր-քիան հաշտութեան հետեւեալ պայմաններն է առաջարկում. 1) Յունաստանը պէտք է վճարի 3 միլիոն ֆունտ. 2) Թիւրք-յունական սահմանները պէտք է ուղղվեն. 3) յոյն հայտանքների մասին գոյութիւն ունեցող աւանձին դաշնակիւնները պէտք է ջնջվեն. 4) Թիւրքիային պէտք է յանձն-վեն յունաց գրասէւոր նաւերը: (Այդ մասին ընթերցողները տեղեկութիւն կարող են գտնել և այսօրվայ հեռագրերի մէջ): Ուրիշ տեղե-կութիւնների հիման վրա, Թիւրքիայի առաջար-կած պայմանները հետեւեալներն են. բացի վե-րայիշեալ պայմաններից նաեւ կրեւե՛ կղզու-նը նաւարարութեան սահմանափակումը: Իսկ «Daily Telegraph» լրագրի աւելով, հաշտութիւնը Յու-նաստանի և Թիւրքիայի մէջ ենթադրվում է կնքել հետեւեալ պայմաններով. 1) յունաց զօր-քը պէտք է հեռացնել Կրեւեից. 2) պէտք է

վերահաստատվի status quo ante, որքան այդ վերաբերում է Յունաստանին. 3) կրեոնի կառավարության կազմակերպության ժամանակ մեծ պետությունները պետք է ինկատի ունենան տեղական ազգաբնակչության ցանկությունները:

Ի տալացի կամաւորները: Հոսում ստացվել է տեղեկություն Աթէնքից, որ զանազան ուղղություններով իտալական կամաւորները մէջ համաձայնություն են կայացել, որի հիման վրա Ռիչիոտի Գարիբալդին մնում է Յունաստանում և գնում է Լալիքոս իսկական զորքերը իտալականների հետ, իսկ գնդապետ Բերտէ գնում է Թէսալիա իբրև պարզազուրկ իտալական սոցիալիստների:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԲՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՅ

Աթէնքի, 3 մայիսի: Վերանցիայից հաղորդում են, որ կանոնադր զորքերը և էպիրոսեան ֆալանգսն ալ իջան Լուրի գետաբերանի միւս կողմում, Նիկոպոլիսի բառարաններից տեղացող կրակի տակ, մի և նոյն ժամանակ արեւելեան նաւատորմը յարձակում գործեց Պրէվլայի վրա:

Արտալից ստացված տեղեկությունների համեմատ, Բելիսարիոսի սկսեց կռիւ մղել իմաբէի մօտ: Բոյների կողմից վերադարձված են 1 մայր, 4 օրէն-օֆիցիւրներ և 27 զինուորներ: Թիւրքերը յետ են քաշվում, բայց այն փոքրիկ խմբից, որին չլքեցան եւ յոյները: Գալֆի-նոպոլիսի բրիգադան առաջ գնաց մինչև խալէ-կիաղէս և գրաւեց այդ տեղը:

Կ. ՊՈԼԻՍ, 3 մայիսի: Միջամտութեան առիթով զենայանի վրա մտադրականները Բ. Կուրեւ պատմականայն, որ սովորած հնարաւորութիւն կանենայ այդ հարցով զբաղվելու միայն բարամի տնտեսից յետոյ:

Աթէնքի, 3 մայիսի: Յայտարարված է վճարի նաւահանգիստ պաշարում: Պրէվլայի գրաւելու լուրը չէ ձգլում, բայց պատերազմական գործողութիւնները Լալիքոսում, ըստ երկայնի, եւանդով են շարունակվում: Գոմօսից ստացված տեղեկությունների համեմատ, թիւրքաց զորքերի տեղափոխութիւնները ստիպում են երեւոյթի, որ չուսով նրանք յարձակում կը գործեն:

ԼՈՆԴՈՆ, 3 մայիսի: «Times» լրագրին Կուրեւից հետադրում են, որ այնուհետ հասան 3000 մարդիկ: Մի կողմից լուրեր են պտտում տեղի ունենալի կռիւ մասին, միւս կողմից — զինադադար անելու մասին:

«Morning Post» լրագրի տեղեկությունների համեմատ, հաւանական է համարվում, որ յոյները կը հեռանան Կուրեւից:

ՊԱՐԻՉ, 3 մայիսի: Կարծում են, որ թիւրքերին պատերազմական տուգանք կը պահանջի 78 միլիոն: Պետությունները ոչ մի կերպ չեն պարտաւորացնի Յունաստանին կը նաւատորմը տալ: Բայց ի՞նչ Յունաստանը կը ցանկանայ փրկուլ վճարել պատերազմական տուգանքը, այն ժամանակ պետությունները կաշխատեն հնարք գտնել, որի հնորակ կապահովվեն նախկին պարտաւորութիւնների չափերը: Հաստատվում է, ըստ երեւոյթի, որ թիւրքերին դիտաւորութիւն ունի բանակցութիւններ սկսել միայն Կուրեւի գրաւելուց յետոյ, որից արդէն յոյները սկսել են հեռանալ:

Աթէնքի, 3 մայիսի: Արտալից ստացված կարծի հեռագրերը հաղորդում են, որ մայիսի 2-ի առաւօտից Գրիբովի մօտ, զէպի Ֆիլիպպոսեան տանող ճանապարհով, տեղի ունի արհիւմահեղ կռիւ: Երկու կողմի կարողանանք մեծ են: Կռիւը շարունակվում է: Մանրամասնություններ չը կան:

Կ. ՊՈԼԻՍ, 3 մայիսի: Բ. Կուրեւ տեղեկացաւ, որ յունական նաւերը երեւոյթի Արիւպլեազի գանազան կղզիների մօտ: Այդ պատճառով Կարթագենի նաւատորմի հրամանատարին հրամայված է հետամուտ լինել այդ նաւերին: Այժմ այդ նաւատորմի հրամանատարից հեռագիր է ստացված, որով հաղորդում է, թէ վերադարձած թիւրքաց նաւերը իրանց հետ բերին 11 առաջատար նաւեր, որոնք ալ իջեցնելու պատրաստութիւն են: Երբ տեսնում:

Կ. ՊՈԼԻՍ, 3 մայիսի: Արտալից գործերի միջնորդը խոստացաւ զենայանից ամենատաքին, որ Բ. Կուրեւ պատմականայն կը տայ յայտադրին, և հաղորդեց, որ Կուրեւից, յունական մի քանի բառապատկերներ ինչ զինադրութիւնից յետոյ, գրաւեցին թիւրքերը: Յունաց զորքը յետ քաշվեց:

Այսօր, կէսօրին, տեղի ունեցաւ զենայանի խորհրդակցութիւն: Այն լուրը ստաւ է, որ իբր թէ զենայանները արդէն զենակցում են Բ. Կուրեւի հետ խաղաղութեան դաշն կապելու մասին: Նրանք պահանջում են, որ առաջ զաղարած լինեն պատերազմական գործողութիւններից: Բ. Կուրեւ պատմականայն զինադադար անելու մասին, ժամ առ ժամ սպասվում է, որից յետոյ կը սկսվի միջամտութիւնը:

Կ. ՊՈԼԻՍ, 4 մայիսի: Մայիսի 3-ին միջնորդները խորհուրդը գումարվեց քննելու համար Բ. Կուրեւ պատմականայն պետությունների յայտադրին, երբ տեղեկություն ստացվեց, որ 3,000 հոգուց բաղկացած յունական զորաւորմանը ալ իջաւ զէպի հիւսիս Պրէվլէից: Բ. Կուրեւ տրամադրութեան վրա դա լաւ տպաւորութիւն չը գործեց: Կեսպանական շրջաններում զարմանում են յունական կարեւոր միւս այն բանի համար, որ այն օրէկին, երբ իրանք պնդում են միջամտութեան վրա, նա յարձակողական քայլ է սկսում: Այդ շրջանները այն կարծիքի են, որ այդ զէպը կարող է զանազան միջամտութեան ձեւաւորութիւններ, իսկ կրկնութիւնը կարող է կատարելապէս արդեւելներ դնել նրա առաջ և կը վառացնի Յունաստանի դրութիւնը:

Աթէնքի, 4 մայիսի: Վերականգնելու Կուրեւի մօտի մօտ թիւրքերը յետ քաշվեցին զէպի Ֆարալի:

Կրեոնից վերադարձան 500 զինուորներ և 20 օֆիցերներ: Նրանց զինամթերքից ցոյցերով: Նիկոպոլիսում արեւելութեան է ենթակցվում: Կուրեւից ամբողջ զէպը ստանալի անձր են քաշվում: Լուսաբային զէպի Ֆարալի տանող ճանապարհի վրա երեւց թիւրքաց հեծելազորքը, որը յետ քաշվեց յունաց առաջնորդ Գրիբովի կրակի տակ: Թիւրքերը այրեցին բոլոր զէպերը Ֆարալի շուրջը:

Կ. ՊՈԼԻՍ, 4 մայիսի: Բ. Կուրեւ գիշերը պատմականայն պետությունների վերին քայլին: Պատերազմական գործողութիւնների զաւարեցնելը կարելի է համարում միայն հետեւեալ հիմնաւոր կէտերի համաձայն. զինադադար անել և խաղաղութեան դաշն կապել կարելի կը լինի, երբ Յունաստանը 10 միլիոն ֆունտ պատերազմական տուգանք կը վճարի, պէտք է նախկին սահմանը վերականգնել, վերանորոգել դաշնագրերը թիւրքերի յունական պատկերի մասին միջազգային օրէքի հիման վրա. դաշնագիր կապել սովորական (յանաւորներին) յետ տալու մասին և porto franco հաստատել վաճառքի և Պրեւլէից նաւահանգիստներում հէջ զինադադար հաստատելուց յետոյ. խաղաղութեան բանակցութիւնները վարելու համար լիազորները պէտք է հաւաքվեն Ֆարալիում:

Կ. ՊՈԼԻՍ, 5 մայիսի: Պաշտօնապէս երկրորդ զինվորային հրամանատարը Լուրեւում յայտնում է, որ 15,000 յոյներ յետ նահանջեցին զէպի Չէյոնուրի, երկու օրվայ ծանր կռիւից յետոյ:

Աթէնքի, 5 մայիսի: Պետություններին ուղղած յայտագրի մէջ Յունաստանը իրան միջնորդական պատրաստանաւ չէ համարում Լալիքոսում, թիւրքերի զէպ եղած գործողութիւնների համար, այն պատճառով որ թիւրքաց զորքը, ամբողջեւ լով Գրիբովի, պատրաստվում է յարձակում գործել Արտալի վրա: Յունաստանը զանգաւում է նոյնպէս որ թիւրքերին զինակորում է փոքրիկ նաւեր՝ ծովային աւազակութիւնների համար:

Կրեոնից յետ է կանչված զորքի երկրորդ բաժինը, չուսով յետ կը կանչվի և երկրորդ բաժինը:

Կ. ՊՈԼԻՍ, 5 մայիսի: Կեսպանական շրջաններում կարծում են, որ հաշտութեան բանակցութիւնների համար թիւրքերից առաջարկած հիմնքերի պահանջը յոյներին նոր յարձակողական քայլ է Լալիքոսում: Այդ պահանջները համարում են անհեշտ և սպասում են, որ Բ. Կուրեւ կը պակասացնի նրանց:

ԼԱՐԻՍՍ, 5 մայիսի: Թիւրքերի ծրագրերը Կուրեւից զինվորական համար, եւանդով ի կատար է ածվում: Բազմաթիւ բառապատկերներ մօտենում են օգնելու համար:

ԿԱՆԵՑԱ, 5 մայիսի: Այսօրից ուղարկված են 1000 յոյն զինուորներ:

Կ. ՊՈԼԻՍ, 5 մայիսի: Պաշտօնապէս Բոյնքերը, որոնք փորձում էին Արտալից՝ Գրիբովիցի վրայ յայ մասնը Գրիբովի Գրեմենիցիայի և Գրիբովի բարձրութիւնների վրա տեղի ունեցած կռիւից յետոյ, յետ մղվեցին Ֆիլիպպոսի ձեռքով կորցնելով 107 մարդ: Պաղատեան կամարէի մօտ թիւրքերը յետ մղեցին յունական հետեւի զորքը և արտիկէրան: Թիւրքերի կորուստները երեք օրվայ կռիւից յետոյ աննշան են:

Կ. ՊՈԼԻՍ, 5 մայիսի: Յունական պատերազմական նաւերը ումբակում են Պլատոնի, Սալոնիկեան ծոցում, և բունդին առեւտրական առաջատար թիւրքաց նաւը:

Կեսպանայից հաղորդեցին իրանց կառավարութիւններին թիւրքերի առաջարկած խաղաղութեան պայմանների և սպասում են հրահանգների:

88 նոր կազմակերպված բառապատկերից՝ 32 ուղարկվում են Լալիքոս, 40—Թէսալիա, իսկ մնացածները—Չիւսիւնիա և մի քանի ուրիշները այն նաւահանգիստային բառապատկերներ, որոնք գրութիւնը բարեկարգ է ալ իջեցնելու համար:

ԲԻՊԱ, 3 մայիսի: Մայիսի 1-ին, երեկոյան, զինուորական դաշնացի լեյտենի Իլաւ խրեւի գծի Բոլիկէնդօրի և Էլվա կայարանների մէջտեղ 16 վազմունքի են քարկծած: Սպանված են մօտ 100 զինուորներ և 2 օֆիցերներ, վերաւորված են 60 զինուորներ:

ՊԱՐԻՉ, 4 մայիսի: Հանրապետութեան նախագահը ընդունեց բարոն Մորենէյմին, որին յանձնված էր հաղորդել պ. Ֆորին թագաւոր Կայսրի հետեւեալ նամակը:
«Պարոն նախագահ, ամենախնդաւոր և մեծ

բարեկամ: Կայսրուհին և իս յայտնում ենք ձեզ այն խորին յուզմունքը, որ տիրեց Մեզ, երբ լսեցինք սպառնալի աղէտի մասին Պարիզի բարեգործական բազարում: Գուք այնքան ծանօթ էր զէպի Ֆրանսիան Մեր տածած զգացմունքներին, որ հաւատացած կը լինէր Մեր խորին և անկեղծ համակրութեան մէջ այն զգալիութեան համար, որ պատճառեց այդ սիրտ պատուող և դառն վիշտը Պարիզում: Միանալով ամբողջ արտով այն բանին, ինչ որ դուք անձամբ պէտք է զգաք մի այդպիսի փորձութեան ժամանակ, Մենք չտապում ենք յայտնել ձեզ Մեր ամբողջ համակրութիւնը, նոյնպէս ամբողջ Ռուսաստանի համակրութիւնը:

«Յայլ տուէք մի և նոյն ժամանակ, պարոն նախագահ, ամենախնդաւոր և մեծ անխնայութեամբ, կրկին հաւատարմեցնել ձեզ իմ անփոփոխ և անկեղծ բարեկամութեան մէջ: Ստորագրված է Էլիզաբէթ»:

Թագաւոր Կայսրի նամակը հանրապետութեան նախագահին՝ ամենաուղեւորված տպաւորութիւն գործեց հասարակութեան բոլոր զատակարգների վրա, առանց կուսակցութիւնների զանազանութեան: Գաւառական լրագրիները վկայում են այն անկեղծագրեւի ուրախութեան մասին, որ պատճառեց է ֆրանսիական ժողովրդին թագաւոր Կայսրի նամակը:

Ս. ՊԵՏԵՐՈՎՈՒԹՅԱՆ ԲՈՐՈՍԱ

Միջին 2-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	93	ր. 95	կ.
Բերլինի վրա 100 մարկ	45	»	90
Պարիզի վրա 100 ֆրանկ	37	»	55
Ռուկի	արծէ.	7.50	»
Մաքսային կուպոններ	149	»	»
Բարսային դիսկոնտ	5 1/2	—	70/0
4 1/2 պետական ընդհան.	99 1/8	»	»
Ներքին 5 1/2 առաջին փոխառութիւն	285 1/2	»	»
— երկրորդ	249 1/2	»	»
5 1/2 գրաւ. թղթ. աղ. բանկի	207 3/4	»	»
5 1/2 պետական երկաւ. ընդհան.	—	»	»
4 1/2 ներքին փոխառութեան	98 1/2	»	»
4 1/2 օգրաւ. թղթ. աղ. կաւ. բանկի	—	»	»
Աղ. կաւ. Պետ. բանկի խաղաղութիւն	—	»	»
4 1/2 օգրաւ. թղթ. աղ. կաւ. բանկի	—	»	»
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	—	»	»

Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օրինագրային

1013 8 — »

Մակալայի քաղաք. օրինագրային

101 1/4 — »

Օգէտայի

100 — »

Թիֆլիսի

98 1/4 — »

Թիֆլիսի կաւ. բանկի 6 1/2 —

— » — »

5 1/2 —

— » — »

Գոթլայի

— » — »

5 1/2 —

— » — »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՎ

Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐՄԵՐՈՒՆԻ

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կանոնաւոր և ուղղակի նաւադնացութիւն ՄԱՐՍԵՅԻՅ ԲԱՐՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթից, Եւ հալաւալը՝ Բաթիլից Մարսէլ, մանկալ Տրապիզոն, Սամսոն և Պոլիս: Մեկնում է Բաթիլի չորեքշաբթի, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ձախց յետոյ: Բաթիլից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմարներ սովորում են սովորականից Պալաս գնի օրով: Այդպէս չորեքշաբթի մասին հարկաւոր տեղեկությունները ստանալու համար թող բարեհաճեն զիմը ընկերութեան գործակառարներին: ԲԱՐՈՒՄՈՒՄ—պ. վիկտոր ԳԱՐԻՅԻՆ, Լաբրէլ-Մայլա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիմիլի փող. Նախկին Արմաւուր քաղաքապետ: ԲԱՐՈՒՄ—պ. Ս. Գիւլաբեանին, Կոլիբեալիսկայա հրադարակ: ՆՈՎՈՐՈՍՍԻՅԱ—պ. Մելիսի Զեքիյանցիներին: (№ 16) 14—20

ՄՍՍՎԱՅԻ ԱՐԵՆԵԼԵԱՆ ԼԵՋՈՒՅՑ ԼԱԶԱՐԵԱՆ ձԵՄԱՐԱՆԻ ԿՈՂՄԵՅ

Հ Ա Շ Ի Ի

ՍԱՐ ԳԻՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՍՈՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆԻ ԿՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒԹԻ ԱՌ 1896 Թ.	տոկոսաւոր թղթեր	առ ձեռն դրամ
Մ Ո Ւ Տ Բ		
Կար ցմէկն յունվարի 1896 թ.	64,100 ր.	1,268 ր. 82 կ.
1896 թ. ընթացքում մուտք է եղել	3,400 »	3,307 » 68 »
	67,500 ր.	4,576 ր. 50 կ.
Ե Լ Բ		
Վճարված է՝ տոկոսաւոր թղթեր գնելու:		
համար 3,372 ր. 81 կ. և 1895 թ. հաշիւը լըրացիւնելու տպագրելու համար 18 ր. 72 կ.		
Ընդամենը		3,391 ր. 53 կ.
ՅՆԵՆ յունվարի 1897 թ. կայ առ ձեռն	67,500 ր.	1,184 ր. 97 կ.
Ծանօթութիւն. վերոյիշեալ 67,500 ր. տոկոսաւոր թղթերը կազմված են.—ամենաւաղիկ կապած 6 1/2 1/2, մի արծէթ թղթից 25,000 ր. արծաթեւոր, որ գտնվում է պետական բանկի Թիֆլիսի բաժնեմուծներում և Մոսկովայի նահանգական զանաքարմու գտնված հետեւեալ արծէթ թղթից.—1893 թ. 5-դ կարգի (ВЫПУСКЕ) առաջ 4 1/2 տոկոս փոխառութեան օրինագրային արծէթ թղթից 39,800 ր. արծաթեւոր, 500 ր. արծաթեւոր, պետական ընդհան 4 1/2 տոկոս փոխառութեան օրինագրային արծէթ թղթից 300 ր. արծաթեւոր, 40 օրինագրային արծէթ թղթից 700 ր. արծաթեւոր, Մոսկովայի հաղային բանկի 5 1/2 տոկոս փոխառութեան օրինագրային արծէթ թղթից 800 ր. արծաթեւոր, 125 տարաւոր ընթացքում մինչև 12 միլիոն ր., որից յետոյ պէտք է գործադրել կառավարի անուանով ուսումնարանական հաստատութիւններ և զանազան հիմնարկութիւններում սովորեցնողներին հիմնելու համար:		
Վերադառնալ Լաւրեան ձեւաբանի արեւելեան լեզուաց՝		Գէորգ Գանանեան
2—2	(№ 45)	